«ԱԶԱՏԵՔ ՄԵԶ ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆԻՑ»

Երեկ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների ղեկավարությամբ, մի քանի հրատապ հարցեր քննարկելու համար, Գիտությունների ազգային ակադեմիա էր հրավիրվել Աժ նախագահ Արթուր Բաղդասարյանը:

Մի կարճ պահ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանին հնարավորություն տալով գովազդել ու գովաբանել ակադեմիան՝ հատկապես Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրենը, ակադեմիկոս Կոնստանտին Ղարագյոզյանը սարսափելի անհարմար վիճակի մեջ դրեց Աժ նախագահին: «Ձեզ ուզում եմ դիմել որպես գիտությունների դոկտորի: Պարոն Սերգո Երիցյանը, երբ «Երկիր» թերթում հայտարարել է, որ գիտությանը փող տալ պետք չէ՝ ձեզ հետ նախօրոք խորհրդակցե՞լ է: Մենք պարտավոր ենք՝ անկեղծ լինել: Գիտե՞ք ինչ, այդպիսի նախարար ունենալն անպատվաբեր է գիտության համար: Ես ձեզ պարզ եմ ասում՝ ոչ մի բանից չվախենալով: Ձեր ռեյտինգն ավելի կբարձրանա, եթե մեզ անմիջապես ազատեք այդպիսի նախարարներից»,- հայտարարեց ակադեմիկոս Ղարագյոզյանը: Այնուհետև Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրենը հայտարարեց, որ անհրաժեշտ է՝ Հայաստանում կրճատել նախարարությունների թիվը, եւ նրանց տրամադրվող փողերը տալ գիտությանը: «Ասում են՝ գիտության համար փող չկա: Բա հարմա՞ր է, որ գիտնականը ստանա 16 հազար դրամ աշխատավարձ»,- Աժ նախագահին հիշեցնելով դեռ նախօրեին վերջինիս արած այն հայտարարությունը, որ պետք է լինի սոցիալական արդարություն՝ ակադեմիկոսը հարցնում էր,- «Բա դա սոցիալական հավասարությո՞ն է, որ ավագ գիտաշխատողն այդքան փող է ստանում»: Պարոն Ղարագյոզյանը ակադեմիկոսների ծափերի ներքո Արթուր Բաղդասարյանին խորհուրդ էր տալիս «միացնել Սերգո Երիցյանին եւ Թամար Պողոսյանին» եւ, 2 նախարարություններն իրար միացնելով, ստեղծել կրթության ու մշակույթի վարչություն: Արթուր Բաղդասարյանը, սակայն, անմիջապես անցավ իր կուսակցության փոխնախագահի պաշտպանությանը՝ հայտարարելով, որ իրենք Սերգո Երիցյանին փոխելու ոչ մի մտադրություն չունեն: Ըստ նրա, դեռ որեւիցե մեկը Սերգո Երիցյանի գործունեությունից դժգոհություն չի հայտնել ոչ իրեն եւ ոչ էլ կառավարությանն ու հանրապետության նախագահին: «Ես այդ հարցով զրուցել եմ նրա հետ, եւ մարդը հայտարարել է, որ ինքը նման արտահայտություն չի արել»,- երեկ ասում էր Արթուր Բաղդասարյանը, որ դժվարությամբ էր թաքցնում իր նյարդայնությունը: Նա ակադեմիկոսներին խորհուրդ տվեց, որ եթե Սերգո Երիցյանին ուղղված հարցեր կան՝ հրավիրել վերջինիս ակադեմիա եւ հարցադրումներ անել: Ակադեմիկոսներին հիշեցնելով, որ Սերգո Երիցյանը գիտությունների թեկնածու է, դոցենտ, ԵՊՀ դասախոս եւ այլն, Արթուր Բաղդասարյանը հայտարարեց, որ ինքը կողմնակից է, որպեսզի Երիցյանին աշխատելու հնարավորություն տրվի: «Մարդ է, որ նաեւ բազմաթիվ թերություններ ունի, իհարկե: Ո՞ր մեկը չունի: Դնենք խնդիրները, թող մարդն աշխատի: Իսկ աշխատանքից միշտ էլ կարելի է ազատել»,- իր տեղակալին փորձում էր պաշտպանել Աժ նախագահը: Այդտեղ, սակայն, ակադեմիկոսները նրան հիշեցրին դպրոցներում իրականացվող օպտիմալացման ծրագիրը: Սակայն, ըստ Արթուր Բաղդասարյանի, օպտիմալացման ծրագիրը սկսվել է Երիցյանի նախարար նշանակվելուց առաջ: «Այդ օպտիմալացումն իր դրական բաներն էլ ուներ, բայց մենք ասում ենք՝ վերջ, պիտի կանգնես, հերիք է»,- ասում էր Արթուր Բաղդասարյանը: Ակադեմիկոսներին հանգստացնելու համար նա հայտարարեց, որ ընդունում է նրանց ասածը եւ Երիցյանին կասի, որ այսուհետ ավելի ուշադիր լինի գիտության խնդիրների նկատմամբ:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ